Կարգապահական գործ թիվ ԿԳ-16061

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2016 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 242-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/163-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՏԻԳՐԱՆ ԵԳՈՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Կարեն Մեժլումյանի, Խորհրդի անդամներ՝ Սիմոն Բաբայանի, Նելլի Հարությունյանի, Լուսինե Սահակյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Երվանդ Վարոսյանի, Մարտուն Փանոսյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Տիգրան Եգորյանին (արտոնագիր թիվ 1187) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Տ՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը</u>.**

12.03.2016թ. Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում **(այսուհետ՝ Պալատ)** մուտքագրվել է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի **(այսուհետ նաև՝ Դատարան)** դատավոր Նելլի Բաղդասարյանի՝ «Դատական սանկցիա կիրառելու մասին» 09.03.2016թ. որոշումը **(այսուհետ՝ Որոշում)**, որում նշվել է, որ Դատարանի վարույթում քննվող թիվ ԵՇԴ/0125/01/14 քրեական գործով դատական քննության ընթացքում, 2016թ. մարտի 09-ին, ժամը 13.00-ին նշանակված դատական նիստի ժամանակ ամբաստանյալ Վարդգեզ Գասպարին պառկել է հատակին, ինչից հետո նիստը նախագահողը նրա նկատմամբ կիրառել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված սանկցիա՝ «նախազգուշացում» և հորդորել է պատշաճ դիրք զբաղեցնել դատական նիստի բնականոն ընթացքը շարունակելու նպատակով: Ամբաստանյալ Վարդգեզ Գասպարին որևէ կերպ չի արձագանքել նիստը նախագահողի գործողություններին շարունակելով պառկած մնալ դատական նիստերի դահլիճի կենտրոնում, որից հետո նիստը նախագահողը ամբաստանյալի նկատմամբ կիրառել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված սանկցիան «նիստերի դահլիճից հեռացնելը»:

Որոշման համաձայն՝ ամբաստանյալի պաշտպան Տիգրան Եգորյանը հայտարարել է, որ եթե դատարանը հեռացնում է Վ.Գասպարիին դատական նիստերի դահլիճից, ապա ինքը ևս չի ցանկանում մասնակցել դատական նիստին և կլքի նիստերի դահլիճը: Նիստը նախագահողը պաշտպանին զգուշացրել է, որ չի թույլատրում հեռանալ դատական

նիստերի դահլիճից և իր օրինական կարգադրությունը չկատարելու դեպքում դատարանն իրավասու է կիրառել դատական սանկցիա, սակայն Տիգրան Եգորյանը լքել է դատական նիստերի դահլիճը:

Որոշմամբ նշվել է, որ Դատարանը խորհրդակցական սենյակում քննության առնելով փաստաբան Տիգրան Եգորյանի դատական նիստում դրսևորած վարքագիծը, գտել է, որ վերջինս խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերում ամրագրված իրենց պարտավորությունները, մասնավորապես, չենթարկվելով դատական նիստը նախագահողի օրինական կարգադրությանը ու չպահպանելով դատական նիստի կարգուկանոնը, մինչև ընդմիջում հայտարարելը առանց նախագահողի թույլտվության լքել է դատական նիստերի դահլիճը, ինչի հետևանքով դատական նիստը կրկին ձախողվել է:

Դատարանը գտել է, որ դատական նիստի դահլիճից հեռանալով փաստաբան Տ.Եգորյանն իր դատավարական իրավունքներից օգտվել է անբարեխղճորեն և անհարգելի չի կատարել իր դատավարական պարտականությունները, ինչով և խոչընդոտել է դատական նիստի բնականոն ընթացքին ու անհարգալից վերաբերմունք է դրսևորել դատարանի և դատավարության մասնակիցների նկատմամբ:

Դատարանը, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով, 314-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով և 314.1-րդ հոդվածով նախատեսված իրավական նորմերը, գտել է, որ փաստաբան Տ.Եգորյանին պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտությունից ելնելով պետք է դիմել փաստաբանական պալատ:

Դատարանը 09.03.2016թ. կայացրել է «Դատական սանկցիա կիրառելու մասին» որոշում, որով որոշել է. *«Ամբաստանյալ Վարդգեզ Լիվանի Գասպարիի պաշտպան, ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Տիգրան Եգորյանին /արտոնագիր N 1187/ պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմել փաստաբանական պալատ:»:*

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 24.03.2016թ. թիվ 103-Ա/ԿԳ-16061 որոշմամբ փաստաբան Տիգրան Եգորյանի (արտոնագիր թիվ 1187) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագրքի)** 4.1 կետի խախտման հատկանիշներով՝ Դատական սանկցիա կիրառելու մասին որոշման մեջ նշված և փաստաբան Տիգրան Եգորյանին վերագրվող վարքագիծը ստուգելու նպատակով:

Կարգապահական վարույթով դիմող է ճանաչվել Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Նելլի Բաղդասարյան):

Կարգապահական գործը 29.03.2016թ.-ին հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Դավիթ Հունանյանին:

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Դիմողը նախապատրաստման փուլում բացատրություն չի ներկայացրել: Խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի և ժամի մասին:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>

Պատասխանողը բացատրություն տալով հայտնել է, որ դատարանի նիստերի դահլիճից հեռանալու համար իր նկատմամբ «նախազգուշացում» սանկցիան կիրառելուց հետո չի լսել, որ դատարանը կրկին պահանջել է չհեռանալ նիստերի դահլիճից:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

Կարգապահական գործը նախապատրաստողը եզրակացրել է, որ պատասխանող Տիգրան Եգորյանի արարքում Կանոնագրքի 4.1. կետի պահանջների խախտման հատկանիշների առկայության փաստը կախված է նրանից՝ արդյոք նիստը նախագահող դատավորի կողմից գործադրվել են ապօրինի կարգադրություններ դատական նիստին մասնակցող անձանց նկատմամբ, թե ոչ: Կարգապահական գործը նախապատրաստողին չի ներկայացվել որևիցե ապացույց ապօրինի կարգադրությունների վերաբերյալ:

30.05.2016թ. գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2016 թվականի նոյեմբերի 11-ին, ժամը՝ 19:00-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (**այսուհետ՝ Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները՝ դատական նիստի ձայնագրությունն ու պատասխանողի բացատրությունը, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1) Պատասխանողը թիվ թիվ ԵՇԴ/0125/01/14 քրեական գործով հնդիսանում է ամբաստանյալ Վարդգեզ Գասպարիի պաշտպանը:

2) 2016թ. մարտի 09-ին, ժամը 13:00-ին նշանակված դատական նիստին Դատարանը ամբաստանյալ Վարդգեզ Գասպարիի նկատմամբ կիրառել է դատական սանկցիա՝ նիստերի դահլիճից հեռացնելը և Վարդգեզ Գասպարին հեռացվել է նիստերի դահլիճից:

3) Այդ կապակցությամբ ամբաստանյալ Վարդգեզ Գասպարիի պաշտպան Տիգրան Եգորյանը հայտարարել է, որ քանի որ իր վստահորդը հեռացված է նիստերի դահլիճից և որն ինքն իր վստահորդից ունի հստակ հանձնարարություն առանց իր մասնակցության դատական նիստերին չմասնակցելու, բացի այդ, առանց ամբաստանյալի դատական նիստեր իրականացնելը խախտում է Կոնվենցիայի՝ արդար

դատաքննության իրավունքի և ես չեմ կարող օրինականացնել այդ խախումը, ես կատարելով իմ պաշտպանի պարտականությունները և հավատարիմ մնալով կոնվենցիայի, ինչպես նաև Սահմանադրության հոչակած՝ արդար դատաքննության իրավունքի պաշտպանության սկզբունքին, հեռանում եմ դատական նիստերի դահլիճից և նորից հայտարարում եմ, որ կմասնակցեմ դատական նիստերին բացառապես իմ պաշտպանյալի մասնակցության պայմաններում:

4) Դատարանը Տիգրան Եգորյանին հորդորում է չլքել դատական նիստերի դահլիճը, իսկ երբ Տիգրան Եգորյանը սկսում է հեռանալ, դատարանը կիրառում է դատական սանկցիա. «նախազգուշացում» և շարունակելով հայտնում է, որ պարոն Եգորյանը չենթարկվեց նախագահող դատավորի օրինական կարգադրություններին, առանց դատավորի թույլտվության լքեց նիստերի դահլիճը, ուստի … դատարանը հեռանում է խորհրդակցական սենյակ դատական սանկցիա կիրառելու հարցը քննարկելու համար:

Նշված փաստերն հաստատվում են գործում առկա ապացույցներով, այդ թվում՝ դատական նիստի ձայնագրությամբ, Պատասխանողի բացատրությամբ:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 10.11.2016թ. տրված տեղեկանքի համաձայն փաստաբան Տիգրան Եգորյանը փաստաբանական գործունեության թիվ 1187 արտոնագիրը ստացել է 15.10.2011թ.-ին և 2011-2016թթ. ընկած ժամանակահատվածում նրա նկատմամբ 8 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ, որոնցից մեկով նա կարգապահական պատասխանատվության է ենթարկվել տույժի ձևով, որը մարվել է, հինգով կարգապահական վարույթը կարճվել է, իսկ երկուսով կարգապահական վարույթներն ընթացքի մեջ են:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Տիգրան Եգորյանի նկատմամբ Կանոնագրքի 4.1. կետի պահանջների խախտում թույլ տալու հիմքով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **(այսուհետ նաև Օրենք)** 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար»:*

Նկատի ունենալով այն, որ կարգապահական վարույթը հարուցվել է «Դատական սանկցիա կիրառելու մասին» 09.03.2016թ. որոշման հիման վրա Փաստաբանի վարքագծի Կանոնագրքի 4.1 կետի խախտման հատկանիշներով, Խորհուրդը գտնում է, որ կարգապահական գործը պետք է քննվի Դատարանի որոշման մեջ նշված փաստական տվյալների և վերը նշված կանոնի համադրման շրջաններում:

Խորհուրդը Պատասխանողի վարքագիծը ստուգում է հարուցված կարգապահական վարույթի շրջանակներում:

Կանոնագրքի **4.1** կետի (Վարվելակերպի կանոնները դատարանում) համաձայն՝ *փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին:* ***Այդ կանոններին ենթարկվելու***

պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը*: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:*

Վերը նշված փաստերի համաձայն երբ Պատասխանողը սկսում է հեռանալ նիստերի դահլիճից, Դատարանը նրա նկատմամբ կիրառում է դատական սանկցիա. «նախազգուշացում», որից անմիջապես հետո, առանց Տիգրան Եգորյանին կարգադրելու մնալ նիստերի դահլիճում, հայտարարում է, որ դատարանը սանկցիա կիրառելու հարցը լուծելու համար հեռանում է խորհրդակցական սենյակ, որտեղից վերադառնալով հրապարակում է փաստաբանների պալատ դիմելու սանկցիա կիրառելու մասին որոշումը:

Խորհուրդը գտնում է, որ Դատարանը մեկ արարքի՝ նիստերի դահլիճը առանց նախագահողի թույլտվության լքելու համար Տիգրան Եգորյանի նկատմամբ կիրառել է երկու սանկցիա՝ «նախազգուշացում» և «փաստաբանական պալատ դիմելը»:

Խորհուրդը գտնում է, որ նման պայմաններում Պատասխանողը չի կարող ենթարկվել կարգապահական պատասխանատվության, քանի որ նիստերի դահլիճը լքելու համար դատարանի կողմից նրա նկատմամբ արդեն իսկ կիրառվել է դատական սանկցիա՝ «նախազգուշացում»:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Տիգրան Եգորյանի (արտոնագիր թիվ 1187) նկատմամբ «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 4.1 կետի, պահանջների խախտման հիմքով հարուցված թիվ ԿԳ 16061 կարգապահական վարույթը կարճել:

2. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ **Կարեն Մեժլումյան**